**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 20-ի N 3 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/6-ՀՈԱԿ**

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/6-ՀՈԱԿ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Գնման ընթացակարգի հրավերում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով ներկայացվող տեխնիկական բնութագրերը՝ 63-րդ, 64-րդ, 80-րդ, 96-րդ, 100-րդ, 101-րդ չափաբաժինների մասով ներկայացնել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

- 63-րդ չափաբաժին՝ Իզոգամ ջրամեկուսիչ գորգ փայլաթիթեղով, պոլիէսթերային թաղանթի հիմքով և ապակե թելերով գործվածքով, բարձր առանձգականությամբ, հաստությունը 3,5 մմ, 1մ լայնությամբ 1քմ-ի համար զանգվածը 3,8 կգ, ջերմակայունությունը - /-5/ C, +/+70/ C, դիմադրություն ջերմության նկատմամբ -27 C- +90 C, 1հատը 10քմ: Պայմանագրով պատվիրատուի կողմից, ըստ անհրաժեշտության, նվազագույն քանակը՝ 50 հատ, իզոգամ պահանջելու դեպքում մատակարար կազմակերպությունը :
- 64-րդ չափաբաժին՝ Նյութի տեսակը՝ բիտումային գլանափաթեթային ջերմամեկուսիչ նյութ: Դասը՝ 2-րդ, հաստությունը 3 մմ և լայնությունը 1մ: Հիմքը՝ ամրացնող հիմքով բիտումային նյութ, վերին և ստորին մակերեսները բիտումային պաշտպանիչ շերտով:Ջրակայունությունը՝ նյութը պետք է ապահովի ջրի ներթափանցումից պաշտպանություն: Նյութը պետք է լինի ամբողջական, առանց ճաքերի, պատռվածքների, անցքերի և տեսանելի այլ վնասվածքների: Մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:
- 80-րդ չափաբաժին՝ Տարողություն 500 լ Նյութ՝ սննդային նշանակության պոլիէթիլեն (PE)բարձր որակի խտացված, որը ջրին չի փոխանցում համ ,հոտ, կառուցվածքը միաձույլ առանց կարերի խմելու ջրի համար նախատեսված:Խմելու ջրի հետ շփվող նյութը պետք է լինի սննդային օգտագործման համար թույլատրելի: երաշխիքային ժամկետը՝ առնվազն 12 ամիս, Չափսեր՝ 1 × 1 × 0,5, Աշխատանքային ջերմաստիճան՝ 0+60°C, Պատերի հաստություն՝ 5մմ, Միացումների տրամագիծը՝ օրինակ՝ DN25, Կափարիչի տրամագիծը 250-300մմ, Տեղադրման եղանակը՝ հորիզոնական,
- 96-րդ չափաբաժին՝ Խողովակի տեսակը ՝ երկշերտ, ծալքավոր, կոշտ պատերով: Նյութը բարձր խտությամբ պոլիէթիլեն: Արտաքին անվանական տրամագիծը՝ 400 մմ: Կառուցվածքը՝ արտաքին ծալքավոր, երկշերտ, ներքին հարթ մակերեսներով: Խողովակները պետք է լինեն դիմացկուն խոնավության, հողի ազդեցության և կոռոզիայի նկատմամբ: Միացման եղանակը լինի մուֆտերով կամ ռետինե խտացնող օղակներով՝ ըստ արտադրողի տեխնիկական լուծման: Մատակարարման միավորը՝ 1 գծմ կամ 1 խողովակ՝ ըստ պատվիրատուի պահանջի: Գույնը՝ արտաքին սև, ներքին՝ արտադրողի ստանդարտին համապատասխան:
- 100-րդ չափաբաժին՝ Շերտավոր հղկաթուղթ 115մմ անկյունային հղկիչի համար: հատիկայնությամբ (P40), նախատեսված մետաղի համար:
- 101-րդ չափաբաժին՝ Շերտավոր հղկասկաթուղթ 125մմ : հատիկայնությամբ ( P36), նախատեսված մետաղի համար:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյան:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 19)
Էլ. փոստ՝ h.paramazyan@promotion.am
Պատվիրատու՝ Մեծամորի համայնքապետարան